ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«22» օգոստոսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-83/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 05.08.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 05.08.2016թ. ներկայացրած բողոքով «Լոկատոր» ՓԲԸ-ն հայտնել է, որ «ԼՄՄԱԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև նաև՝ Հանձնաժողով) 15.07.2016թ. թիվ 2 որոշմամբ Մեծ Այրումի գյուղապետարանի կողմից հայտարարվել է

Մեծ Այրումի գյուղապետարանի կարիքների համար՝ հակակարկտային կայանների տեղակայումով ձեռքբերման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Բարվա» ՍՊԸ-ն և «Լոկատոր» ՓԲԸ-ն:

«Լոկատոր» ՓԲԸ-ն պայմանագրի կատարման համար գնային առաջարկ ներկայացրել է 8 370 000 ՀՀ դրամ, իսկ «Բարվա» ՍՊԸ-ն՝ 10 200 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ ընթացակարգի 1-ին տեղ է զբաղեցրել «Լոկատոր» ՓԲԸ-ն՝ որպես ցածր գին ներկայացրած մասնակից:

Այնուհետև, Հանձնաժողովը թիվ 3 արձանագրությամբ, որում ամսաթիվը բացակայում է, արձանագրել է, որ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում առկա չեն հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսված ստանդարտների համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ և ընկերությանն առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել այդ անճշտությունը: Արձանագրությունն ստացվել է «Լոկատոր» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեին:

«Լոկատոր» ՓԲԸ-ն 02.08.2016թ. պատասխանել է Հանձնաժողովի գրությանը, հայտնելով, որ ընկերության կողմից առաջարված հակակարկտային կայանները համապատասխանում են Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր ստանդարտներին, որոնց համապատասխանությունը հավաստող ապացույցներն արդեն իսկ ներկայացվել են Հանձնաժողովին:

Հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ որոշվել է «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացված հայտը մերժել, քանի որ ընկերության կողմից ներկայացված փաստթաթղթերում առկա չեն հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսված ստանդարտների համապատասխանությունը հավաստող սերտեֆիկատները:

Պատվիրատուն հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով պահանջել է, որ հակակարկտային կայանները պետք է համապատասխանեն EN ISO 12100:2010 և EN ISO 13857:2008 անվտանգության ստանդարտին:

Ինչպես նշված է թիվ 6 հավելվածում, Պատվիրատուն չի պահանջել, որ Ընկերությունը ներկայացնի այդ ստանդարտների համապատասխանությունը հավաստող սերտեֆիկատներ, այլ նշել է, որ հակակարկտային կայանները պետք է համապատասխանեն այդ ստանդարտներին:

Ընկերությունը պատասխանել է, որ Ընկերության կողմից արտադրվող հակակարկտային կայանները համապատասխանում են այդ ստանդարտներին և հայտի հետ ներկայացրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից հաստատված տեխնիկական բնութագրով, որով հաստատվում է, որ Ընկերության կողմից արտադրվող հակակարկտային կայանները համապատասխանում են Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտներին, որն իր հերթին նույնն է, ինչ որ պահանջվել է պատվիրատուի կողմից:

Ավելին, տեխնիկական բնութագրով պահանջվել է այնպիսի համապատասխանության սերտեֆիկատ, որը Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող ապրանքների համար պարտադիր չէ և այն հիմնականում հարկավոր է լինում Եվրոպական երկրներում ապրանք իրացնելու համար:

«Լոկատոր» ՓԲԸ-ն կարծում է, որ Պատվիրատուի կողմից պահանջվող սերտեֆիկատները հակակարկտային կայանի որակին կամ անվտանգությանը չեն վերաբերում:

«Լոկատոր» ՓԲԸ-ն նշելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը և 6-րդ հոդվածի 1-ին մասը, հայտնել է, որ գնման ընթացակարգը կայացվել է օրենքի խախտմամբ. այդպիսի ընթացակարգը չի կարող բխել գնումները կարգավորող օրենսդրության պահանջներից և այդ ընթացակարգով խախտվել և/կամ կարող են խախտվել են Ընկերության, ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքները:

Հավասարության սկզբունքից ելնելով՝ ցանկացած անձ, որը հայտ է ներկայացնում պետական գնման գործընթացին մասնակցելու, Պատվիրատուի գործողություններից պետք է վստահ լինի, որ բոլոր մասնակիցները հավասար են, և մրցույթում հաղթող կարող է ճանաչվել միայն այն մասնակիցը, որը բավարարում է ՀՀ պետական գնումները կարգավորող օրենսդրության պահանջներին, պատվիրատուի կողմից արձանագրված անհամապատասխանությունները անհիմն են, դրանք չեն բխում բուն հրավերի, ինչպես նաև Օրենքի պահանջներից, քանի որ Ընկերությունն իր կողմից առաջարկվող

հակակարկտային կայանի տեխնիկական անձնագրով, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից տարամադրված տեխնիկական բնութագրով առաջարկում է այնպիսի կայան, որը միանշանակ համապատասխանում է հրավերի՝ հակակարկտային կայանի տեխնիկական բնութագրին, ինչպես նաև անվտանգության ստանդարտներին: Այն որ Ընկերության կողմից առաջարկվող հակակարկտային կայանները համապատասխանում են Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր ստանդարտներին, դա փաստ է, որը հաստատվում է իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան փաստաթղթով:

Պատվիրատուն Ընկերությունից պահանջել է այնպիսի փաստաթուղթ, որի պահանջելու իրավունքն, ըստ էության չուներ, քանի որ պահանջվող ստանդաարտների համապատասխանությունը հավաստող սերտեֆիկատներն եվրամիության անդամ պետություններում օգտագործվող սերտեֆիկատներ են, և այդ սերտեֆիկատները հարկավոր են միայն այդ պետություններում արդադրանքը վաճառելու համար, իսկ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և վաճառվող ապրանքների համար այդ սերտեֆիկատները «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի համաձայն պարտադիր չեն, ավելին, այդ սերտեֆիկատները, կարծում ենք, որ հակակարկտային կայաններին չվերաբերող սերտեֆիկատներ են և պատվիարտուի կողմից պահանջվել են մեկ նպատակով՝ ամեն գնով մերժելու Ընկերության հայտը:

«Լոկատոր» ՓԲԸ-ն միևնույն ժամանակ, գտնում է, որ առկա է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, քանի որ Ընկերության կողմից ներկայացվել է այնպիսի հակակարկտային կայանի տեխնիկական անձնագիր և իրավասու մարմնի կողմից տրամադրված Հայաստանի Հանրապետությունում գործող համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ, որը համապատասխանում է Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող բոլոր ստանդարտներին և տվյալ դեպքում հաշվի առնելով այն, որ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին, հանձնաժողովն իրավունք չուներ մերժեր Ընկերության հայտը՝ պահանջելով այնպիսի փաստաթուղթ, որը կապ չունի հակակարկտային կայանի հետ:

«Լոկատոր» ՓԲԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց՝ կողմերի միջև պայմանագրի կնքման մասին որոշումը կասեցնել, չեղյալ հայտարարել «ԼՄՄԱԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, իսկ կողմերի միջև պայմանագիրը կնքված լինելու դեպքում «ԼՄՄԱԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով ընթացակարգը հայտարարել ապօրինի:

2. Մեծ Այրումի գյուղապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Մեծ Այրումի գյուղապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.08.2016թ. թիվ 120 գրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ի 05.08.2016թ. ներկայցրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ամբողջությամբ առարկում են ներկայացված բողոքի դեմ, գտնում են, որ գնման ընթացակարգը օրինական է անցկացվել, պահպանվել են բոլոր պահանջները, իսկ «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը մերժվել է, քանի որ այն չի համապատասխանել գնամն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին և «ԼՄՄԱԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով ընթացակարգը չեղյալ հայտարարելու հիմքեր չկան:

Պատվիրատուն հայտնել է, որ «ԼՄՄԱԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով ընթացակարգի հրավերի 3.1 կետով սահմանվել է, որ նույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և հրավերի 1-ին մասի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիարտուին է ներկայացնում հրավերի թիվ 5 հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը և սույն հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսված ստանդարտներին համապատասխանությունը հավաստող սերտիֆի-կատներ, այսինքն՝ այդ մասով վերը նշվածը բավարար է բողոքաբերի փաստարկների անհիմն լինելը հաստատելու համար: Ընդ որում, հարկ է նշել, որ բողոք ներկայացրած ընկերությունը չի ներկայացրել անհրաժեշտ անվտանգության ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ պահանջված սերտիֆիկատները:

Պատվիրատուն, վկայակոչելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը, հայտնել է, որ գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապաստասխան պահանջվել է միջազգային

ստանդարտներին համապատասխանություն և դրանց համապատասխան սերտիֆիկատներ, ինչը կերաշխավորի կայանների և համայնքի անվտանգությունը և կապահովի անվտանգության բարձր երաշխիքներ:

Պատվիրատուն նաև նշել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի բողոքում նշված այն կարծիքը, որ պահանջվող ստանդարտների համապաստասխանությունը հավաստող սերտիֆի-կատները հարկավոր են միայն այդ պետություններում ապրանքի վաճառքի համար, անհիմն է, քանի որ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ընդունվում է անվերապահորեն այդ ստանդարտները, ավելին՝ որպես անմիջական համագործակցության օղակ առաջարկում է այդ սերտիֆիկատները տրամադրող միջազգային կազմակերպության ստանդարտներին համապատասխանեցման սերտիֆիկատների հաստատում:

Պատվիրատուն նաև նշել է, որ Գնումների բողոքարկման խորհուրդը անդրադար-ձել է հենց այդ նույն ISO միջազգային ստանդարտներին հղում կատարելու իրավաչափությանն իր կողմից 07.06.2016 թվականի թիվ 58/16 կայացված որոշմամբ՝ Մեծ Մանթաշի գյուղապետարանի վերաբերյալ, որտեղ նշել է այն, որ Պատվիրատուն հղում անելով միջազգային ստանդարտին գործել է իրավաչափ:

3. ԳԲԽ-83/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-83/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Լոռու մարզի Մեծ Այրումի գյուղապետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԼՄՄԱԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելու մասին հրահանգի 3.1 կետի «ա» ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հաստատելու և նույն հրավերի 1-ին մասի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ

զբաղեցրած մասնակիցը պատվիրատուին է ներկայացնում հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը և հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսված ստանդարտներին համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ:

3. Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրի 3-րդ կետի համաձայն՝ հակակարկտային կայանները պետք է համապատասխանեն EN ISO 12100:2010 և EN ISO 13857:2008 անվտանգության ստանդարտին:

4. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Բարվա» ՍՊԸ-ն և «Լոկատոր» ՓԲԸ-ն:

5. «Լոկատոր» ՓԲԸ-ն պայմանագրի կատարման համար ներկայացված գնային առաջարկով առաջարկել է 8 370 000 ՀՀ դրամ, իսկ «Բարվա» ՍՊԸ-ն՝ 10 200 000 ՀՀ դրամ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.07.2016թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լոկատոր» ՓԲԸ-ն, իսկ 2-րդ տեղ զբաղեցրած՝ «Բարվա» ՍՊԸ-ն և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում առկա են թերություններ և անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա չեն հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսված ստանդարտների համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ, ինչի հիման վրա վերջինիս առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.07.2016թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա չեն

հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսված ստանդարտների համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ:

9. Կենտրոնը 12.08.2016թ. թիվ 01/04.1/3047-16 գրությամբ դիմել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին և խնդրել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքի քննությունը իրականացնելու նպատակով՝ հայտնել.

1. EN ISO 12100:2010 և EN ISO 13857:2008 անվտանգության ստանդարտները ինչպիսի ստանդարտներ են, արդյոք այդ ստանդարտները պարտադիր են Հայաստանի Հանրապետությունում:

2. Արդյոք առկա են EN ISO 12100:2010 և EN ISO 13857:2008 անվտանգության ստանդարտներին համարժեք Հայաստանի Հանրապետության ստանդարտներ:

3. Արդյոք Հայաստանի Հանրապետությունում արտադրված հակակարկտային կայանները Հայաստանի Հանրապետությունում վաճառելու համար անհարժեշտ է, որպեսզի հակակարկտային կայանները համապատասխանեն EN ISO 12100:2010 և EN ISO 12857:2008 անվտանգության ստանդարտներին:

10. Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն 18.08.2016թ. թիվ ԵԱ-384 գրությամբ հայտնել է, որ ԵՆ ԻՍՕ 12100:2010 և ԵՆ ԻՍՕ 13857:2008 ստանդարտներին համարժեք Հայաստանի Հանրապետության տարածքում ազգային ստանդարտների կարգավիճակով գործում են համապասխանաբար ԳՕՍՏ ԻՍՕ 12100:2013 և ԳՕՍՏ ԻՍՕ 13857:2012 ստանդարտները, որոնց կիրառումը կամավոր է՝ համաձայն՝ «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի:

Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և վաճառվող հակակարկտային կայանները պետք է համապատասխանեն 01.01.2016թ. Հայաստանի Հանրապետությունում գործող ТР ТС 010/2011 «Մեքենաների և սարքավորումների անվտանգություն» ԵՏՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն նաև հայտնել է, որ ԵՏՄ 2011թ. հոկտեմբերի 18-ի թիվ 823 որոշմամբ հաստատված ТР ТС 010/2011 տեխնիկական կանոնակարգին կից ստանդարտների ցանկ, որոնց կամավոր սկզբունքով կիրառման արդյունքում ապահովվում է տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը:

4. ԳԲԽ-83/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումը և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 05.08.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Մեծ Այրումի գյուղապետարանի 15.08.2016թ. թիվ 120 գրությունը և կից փաստաթղթերը, «ԼՄՄԱԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը և «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի 18.08.2016թ. թիվ ԵԱ-384 գրությունը՝ հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-

ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Պատվիրատուն՝ «ԼՄՄԱԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով ընթացակարգի հրավերի 3.1 կետի «ա» ենթակետով սահմանել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պատվիրատուին պետք է ներկայացնի հրավերի թիվ 5 հավելվածով նախատեսված գրությունը, որին պետք է կցվի առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը և հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսված *ստանդարտներին համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ*:

Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրի 3-րդ կետի համաձայն՝ հակակարկտային կայանները պետք է համապատասխանեն *EN ISO 12100:2010 և EN ISO 13857:2008 անվտանգության ստանդարտին:*

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.07.2016թ. թիվ 2 արձանագրության համաձայն որոշվել է ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Լոկատոր» ՓԲԸ-ին և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.07.2016թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում առկա են թերություններ և անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա չեն հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսված ստանդարտների համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ, ինչի հիման վրա վերջինիս առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:

Ըստ «Լոկատոր» ՓԲԸ-ի՝ վերջինս հայտնել է Պատվիրատուին, որ Ընկերության կողմից արտադրվող հակակարկտային կայանները համապատասխանում են այդ EN ISO 12100:2010 և EN ISO 13857:2008 անվտանգության ստանդարտին, իսկ Ընկերությունը հայտի հետ ներկայացրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների

ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից հաստատված տեխնիկական պայմանները, որով հաստատվում է, որ Ընկերության կողմից արտադրվող «Լոկատոր ՀԱԳ-120» հակակարկտային համակարգը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտներին, որն իր հերթին նույնն է, ինչ որ պահանջվել է պատվիրատուի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.07.2016թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա չեն հրավերի թիվ 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսված ստանդարտների համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատներ:

Ի պատասխան Կենտրոնի 12.08.2016թ. թիվ 01/04.1/3047-16 գրության՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի 18.08.2016թ. թիվ ԵԱ-384 գրությամբ հայտնել է, որ *ԵՆ ԻՍՕ 12100:2010 և ԵՆ ԻՍՕ 13857:2008 ստանդարտներին համարժեք* Հայաստանի Հանրապետության տարածքում ազգային ստանդարտների կարգավիճակով գործում են համապասխանաբար *ԳՕՍՏ ԻՍՕ 12100:2013 և ԳՕՍՏ ԻՍՕ 13857:2012* ստանդարտները:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից հաստատված «Լոկատոր ՀԱԳ-120» հակակարկտային համակարգի տեխնիկական պայմանների մեջ նշված է վկայակոչված հակարկտային կայանի ԳՕՍՏ ԻՍՕ 12100-2013 և ԳՕՍՏ ԻՍՕ 13857-2012 անվտանգության ստանդարտի համապատասխանության մասին:

Այսպիսով, «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի գրության բովանդակությունից հետևում է, որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված՝ EN ISO 12100:2010 և EN ISO 13857:2008 անվտանգության ստանդարտներին համարժեք Հայաստանի Հանրապետությունում գործում են ԳՕՍՏ ԻՍՕ 12100:2013 և ԳՕՍՏ ԻՍՕ 13857:2012 ստանդարտները, որոնք առկա են «Լոկատոր ՀԱԳ-120» հակակարկտային համակարգի տեխնիկական պայմանների մեջ: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինս չի ապահովել տեխնիկական

բնութագրով նախատեսված *ստանդարտների համապատասխանությունը հավաստող սերտիֆիկատները:*

Այսպիսով գտնում ենք, որ չնայած այն հանգամանքին, որ ըստ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի 18.08.2016թ. թիվ ԵԱ-384 գրության՝ Ընթացակարգի հրավերով սահմանված *ԵՆ ԻՍՕ 12100:2010 և ԵՆ ԻՍՕ 13857:2008 ստանդարտներին համարժեք* են Հայաստանի Հանրապետության տարածքում ազգային ստանդարտների կարգավիճակով գործող համապասխանաբար *ԳՕՍՏ ԻՍՕ 12100:2013 և ԳՕՍՏ ԻՍՕ 13857:2012* ստանդարտներին, սակայն «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը կայացրել է գնումների մասին ՀՀ օրենսդրության սահմանված պահանջներին համապատասխան, քանի որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից չի ապահովվել տեխնիկական բնութագրով նախատեսված ստանդարտների համապատասխանությունը հավաստող *սերտիֆիկատները,* ինչը պահանջվել է Հրավերի թիվ 6 հավելվածով (Ընկերությունը ներկայացրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից հաստատված «Լոկատոր ՀԱԳ-120» հակակարկտային համակարգի տեխնիկական պայմանները)*:*

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 05.08.2016թ. «ԼՄՄԱԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու և «ԼՄՄԱԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով ընթացակարգը ապօրինի հայտարարելու մասին բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և իրավական

խորհրդատվության վարչության գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-83/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան